ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13

23 դեկտեմբերի 2021 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Նիստին ներկա էին ավագանու 14 անդամներ:

Բացակա էին ավագանու անդամներ՝ Ալբերտ Այվազյանը, Ֆրունզե Անտոնյանը, Վասյա Արշակյանը, Համլետ Գևորգյանը, Շամիրամ Եղիազարյանը, Վաչագան Հովհաննիսյանը, Աշոտ Մաթևոսյանը, Մարտիկ Մաթոսյանը, Զավեն Մանուկյանը, Միեր Մնացյանը, Նարինե Մուշեղյանը, Հասմիկ Նավոյանը, Կարեն Ներսիսյանը, Հակոբ Ոսկանյանը, Թամարա Սուվարյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արծրունի Իգիթյանը, արձանագրում՝ աշխատակազմի քարտուղար՝ Լուսինե Մաթևոսյանը:

Ողջույնի խոսքով հանդես եկավ ավագանու նիստին ներկա ավագանու տարիքով ավագ անդամ Արծրունի Իգիթյանը:

Այնուհետև «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածի համաձայն համայնքի ղեկավար՝ Արծրունի Իգիթյանի կողմից կատարվեց երդմնակալության արարողությունը: Վերջինս ընթերցեց երդման հետևյալ տեքստը՝

«Ստանձնելով Ախուրյան համայնքի ղեկավարի պաշտոնը՝ երդվում եմ.

Համայնքի ղեկավարի լիազորություններն իրականացնելիս պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, օրենքները, համայնքի ավագանու որոշումները, ազնվորեն և բարեխղճորեն կատարել համայնքի ղեկավարի լիազորությունները, ծառայել համայնքի բարգավաճմանը, գործել ի բարօրություն նրա բնակիչների:

Պարտավորվում եմ պաշտպանել համայնքի իրավունքները, օրինական շահերը և սեփականությունը, ուժերիս անմնացորդ նվիրումով սատարել ժողովրդի հավատին, նպաստել նրա նյութական և հոգևոր վերելքին»:

Երդմնակալությունից հետո երդման տեքստը ի պահ հանձնվեց Ախուրյանի համայնքապետարանի աշխատակազմին:

Ավագանու անդամներ

ՄԱՆՈՒԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԿԱՐԵՆ ԱՐՇԱԿՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ԴՐՄԵՅԱՆ

ԿԱՏՅԱ ԷԼԲԱԿՅԱՆ

ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ

ՍԱՄՍՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԼԱԴԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ

ԱԶՆԻՎ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՂՎԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՆԻ ՄԿՐՏՉՅԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԵՐԳՈՅԱՆ

ԷԼԵՆԱ ՍԵՐՈԲՅԱՆ

ՎԱՐՍԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԱՐԾՐՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Լուսինե Մաթևոսյանը

_____